


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 10 ԳՆԸ.
Պաշտպան. 2 Լիր
Վեցամս. Կ. Պոլսոյ 5 ԳՆԸ.
Պաշտպան. 4 Լիր
Ստոր երկրներու 50 ԳՐ.
Շանուգման տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զրշ է. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
լայ :
Իւրաքանչիւր թիւ 40 մարա արծ :



ՀԱՆԱՊԱՋՕՐԵԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԽՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 13 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ասիական թուրքերոյ բարենորոգ-
մանց գործադրութեան սկզբնաւո-
րութիւն մը կը համարուէր Քոմիսէր-
ներուն պաշտօնը : Արդ՝ թէպէտ և
կարնոյ և Բերիոյ Քոմիսէրներէն բը-
նաւ ձայն մը չէին, Տիգրանակեր-
տի կողման Քոմիսէր և Սեբաստիոյ
կուսակալ Ապէտին փաշա լաւ հըրա-
տարակիչ մ'է, և իւր ամեն գործո-
ղութիւնը անմիջապէս ծաղկեալ ո-
ճով մը լրագրաց էջերը կը հասնին :
Դեռ երէկ քանի մը հեռագիր քա-
շած էր, ուր կը ծանուցանէր թէ Տիգ-
րանակերտի, Մարտինի և Մալաթիոյ
մէջ նոր ոստիկանութիւնն և յան-
տարմա գործը կազմուէր է, ամենն ալ
գորդ կարգացող և պատուաւոր ան-
ձերէ : Իրենց նոր զգեստ տրուէր է,
և Պայրամի առթիւ բոլոր վիլայէթին
ոստիկաններն ու յանտարմաները նոր
զգեստներ հագած էին : Սղերդի մէջ
նմանապէս ոստիկանութիւն և յան-
տարմա կազմուէր է : Գոհութեան
պիտանի է որ այնչափ պատուաւոր և
էրէւ հոգեւոր մարդիկ գտնուած
են բարենորոգմանց համաժամ յան-
տարմա և ոստիկանութիւն կազմելու
համար, և յուսալի է որ այսուհետեւ
անոնց վրայ ոչ ևս նոյն դանդաղեա-
րը կը լսուին, որք Զապթիկներու
գէտ ժամանակ ժամանակ կը պատա-
հէին : Կ. Պոլսոյ մէջ անգամ ոստի-
կանութեան զինուորները տակաւին
ըստ մեծի մասին գրել կարգալ գիտ-
ցող անձերէ բարկացած չեն : Բայց
Ապէտին փաշայի մոզական գաւա-
զանը կերելի որ Սղերդի և Մարտինի
կողմերն իսկ գորդ կարգացող և ո-
հող հայերէ մարդիկ հաներ է, որով
ոստիկանութեան և յանտարմանի մա-
սին ոչ միայն Կ. Պոլսէն առաջ անցած
կըլինի, այլ և փառաւոր հերքում մը
կուտայ Տէպայի այն գիտողութեան
թէ հակառակ Պիքոնֆիլտեան ե-
րաշխաւորութեան՝ «Փորը-Սոխաբար-
բարոսութեան խաւարին մէջ ընկրմած
է» : Ապէտին փաշա Բրդաց գլխաւոր
բռնաւորներն Ապանիա արքայաց, Բայց
տակաւին լուր չկայ թէ արդ-
եօք ասոնք իրենց արքայի տեղին հա-
սած են : Մանաւ եֆէնտի Մարտի-
նի Միւթեմարը խուրջիտ պէյն և
Մէհմետի անդամները դադարեցուց և
Միտիաթի Շէյխն Օսման թիմուր ձեր-
բակալել տալով Տիգրանակերտ վըր-
կեց : Քանի մը շաբաթուան մէջ յի-
սուսին չափ միասակար անձինք ձեր-
բակաւրած են Մուշէն մինչև ճէղրէ,
որոց մէջ է եղբր Ղարզան փառի-
շահի կողուած Հաճի Ֆէթիմա պէյ, Սուլ-
թանի Սպառնալի պէյ, Թէյո

պէյ, Սղերդի համիտ աղա, որ Դէհ
գիւղի ջարդերուն հերինակն է եղբր,
և ուրիշներ, որք ամենէն վատ բըւ-
նաւորներ էին : Ֆէթիմա պէյի ա-
պարանքը ժայռի մը գլուխ էր, ուր
կէ վար կը գլորէր որ և է Բերիոսն
եայ, որ իւր պահանջած ստակը կամ
ուրիշ բաները չէր տար : Մանաւ է-
ֆէնտի տար տարի առաջ կարնոյ
կողմը պաշտօն վարած էր և այն ա-
տեն Բերիոյ վրանաբնակութենէ
դադարեցնելով գիւղաբնակ ժողովուրդ-
ընելու համար Ալի փաշային յիշա-
տակաւր մը ներկայած էր, որ հա-
ճութեամբ չէր ընդունուած : Բայց
եթէ այժմ կարենայ դայն դործադ-
րել հարկաւ իւր համբաւին վրայ նոր
և տեւական փայլ մը կաւելցնէ : Քան-
զի քանի որ հիմնական միջոց մը ձեռք
չուռնուի վրանաբնակութեան վերջ տա-
լու համար, շատ դժուարին է երկրին
բարդաւաճութիւնն ապահովել փոր-
ձով տեսնուած է որ այն բռնաւոր-
ներն, որք վայրկեանական նուաւտա-
ցում մը կրած են բանտարկութեամբ
կամ ուրիշ կերպիւ, իրենց վերադար-
ձէն ետեւ խաղաղ ժողովուրդեան առա-
ւել մեծ պատուհաս մ'եղած են :
Մանաւ եֆէնտի Բար-բերդի և Տիգ-
րանակերտի մէջ նշանաւոր գործ մը
տեսած չէր անձամբ, Բայց երբ ա-
ռանձին լրկուեցաւ Մարտինի կողմն,
հոն բաւական գործ տեսեր է, եթէ
աւելի անկողմնակալ թղթակիցներ
վերջէն ուրիշ կերպ տեղեկութիւն
չտան :

Ապէտին փաշա, որ իւր հելլենա-
գէտ երբեմն ալ Գեմսթիենի նմանիլ
կուզէ, Տիգրանակերտի մէջ ճառ մը
խօսեցաւ, ուր ժողովուրդոց կեան-
քը մարդոց կեանքին հետ կը բաղ-
դաւէր, և կըսէր թէ ժողովուրդը
ալ մարդոց նման հիւանդութեան և
առողջութեան վիճակ ունին : Ժողո-
վրդոց հիւանդութիւնն է օրինա-
կանութիւն և գեղծում, որոց դեղն
է պատիւ : Երբ ջերմէ բռնուած հի-
ւանդի մը 24 կուտի չափ Սիւլթան Տը
ֆիլին տալ պէտք լինի, և բժիշկը
հիւանդին հաճելի լինելու համար մի-
այն 10 կուտ տայ, հիւանդութիւնը
կը ծանրանայ : Ուստի Ապէտին փաշա
կը յարէ թէ՝ իբր վարչական բժիշկ՝ աղ-
դու և արդար պիտի լինին Բոմիսէր-
ներն, և վալիին և Տիգրանակերտի
և Մամուրէթ-Էլ-Ազիզի (Գարբերդի)
ժողովուրդեան աշակցութիւնը կըլընդ-
րէ : «Էֆէնտի Ֆէթիմա պէյն համար :

Ահաւասիկ ճարտասան ատենա-
խօսութիւններ, աղդու հեռագիր-
ներ և սկզբնայ յայտարարութիւններ,
որք թէ և կատարելապէս գործադ-
րութեան չհամարադաստաններն, Բայց
և այնպէս անհուն յառաջդիմութիւն
մ'են բաղդատմամբ հին դրութեան,
երբ միայն լուրթիւնը կը տիրէր, և
ղեղմունքներն հրապարակային պար-

սաւ անգամ չէին ընդունուէր : Բայց
չեմք գիտեր թէ ինչո՞ւ համար Բե-
րիոյ և Կարնոյ Քոմիսէրները լուս են,
և իրենց գործողութեանց վրայ՝ եթէ
երբէք ունին՝ բնաւ համար մը տալ չեն
ուղեր հասարակային կարծեաց :

Ռուսական և Չինական կառավա-
րութեանց միջև երկար ժամանակ է
ի վեր կեցած անհամաձայնութեան
պատճառաւ Արևելոյ մէջ նոր չիւ-
թութիւններ ծագելու զրոյցներն ու
վարերը փարատեցան Բուլճարի խնդ-
րոյն կարգադրութեամբ Բուլճա կեդ-
րոնական Սիւրի մէջ Չինական ընդար-
ձակ գաւառ մ'էր Թուրքաստանայ
սահմանակից, և քանի մը տարի առաջ
ծագած ապստամբութեան մը միջո-
ցին Ռուսական զորաց կողմանէ գը-
րաւեալ : Երկնային կայսրութեան
(Չինաստան) կառավարութիւնը քա-
նիցս պահանջած էր որ այդ գաւառն
իրեն վերադարձուի, Բայց մինչև
ցարդ երկու կառավարութեանց մի-
ջև համաձայնութիւն չէր կրցած դո-
յանալ : Չինական կառավարութիւնն
անցեալ տարի Բերիոյ վրայ յատուկ
զեւապանութիւն մը զրկեց գործին
կարգադրութեան համար, որ երբ
Ռուսիոյ արտաքին դործոց պաշտօ-
նատունն երկրորդ խօսք բացաւ Պ-
նիէրսի, այս վերջինն հեռագիր մը
ցուցուց իրեն որ կը ծանուցանէր թէ
Բուլճարի չլծակոյ գաւառաց մէջ նո-
րէն խռովութիւն ծագելով Չինա-
կան իշխանութիւնը վաւերաւոր էին
անկէ : Դեպքանն ամենայն պաղարիւ-
նութեամբ լսեց այս անախորժ լուրը,
Բայց յայտարարեց թէ Չինացոց ա-
մենամեծ յատկութիւնն համբերու-
թիւնն է, և թէ համբերութեամբ այս
նոր դժուարութեան ալ պիտի յաղ-
թեն, և յայնժամ ինք դարձեալ գա-
լով, Բուլճարի խնդրոյն վրայ պիտի
կրնայ բանակցել Չինական զեւապ-
անն գուշակութիւնն երաւ : Չինացիք
այդ դժուարութեան յաղթեցին, և
Բերիոյ վրայ մէջ վերստին բանակ-
ցութիւնը սկսան : Ամայս սկիզբը
Պ. Կիէրսի և Չինական զեւապանին
միջև դաշնագիր մ'ստորագրեցաւ,
որոյ համեմատ Ռուսը Բուլճարի եր-
կրը պիտի պարպեն, Բայց այնպիսի
պայմաններով, որով Ռուսիա գրեթէ
ոչինչ կորուսած կը լինի : Նախ, Չի-
նական կառավարութիւնն հինգ մի-
լիոն ռուպլի հատուցում պիտի վճարէ
Ռուսիոյ, և ասկից դատ՝ Բուլճարի
երկրին մէջ հաստատուելիք չորս Ռու-
սական հիւպատոսութեանց ծախուց
համար մասնաւոր հատուցում մ'ալ
պիտի ընէ : Երկրորդ, Ռուս վաճա-
ռականը Չինաստանայ բոլոր ներսի
վաճառաչահ տեղերը պիտի ընդուն-
ուին : և երրորդ, Բուլճարի երկրին
զերթէ մէկ հինգ երրորդ մասն, որոյ

մէջէն զինուորական ուղի մը կանցնի
դէպի Բերիոյ, Ռուսիոյ ձեռք պի-
տի մնայ : Այսպէս ահա երեք կա-
ռավարութեանց միջև համաձայնու-
թիւն կրցաւ հաստատուել, և Չինա-
կան զեւապանութիւնը Բերիոյ վրայ
կէն իրաւունք գնաց Ռուսիոյ կայսրը
չնորհակալութիւն յայտնելու :

Թայիլ լրագրին Կ. Պոլսոյ թղթա-
կիցը սեպտ. 5 թուով գրած մի նա-
մակին մէջ հետեւեալ հետաքրքրական
իրողութիւնը կը պատմէ :

« Թուրքական իշխանութիւնք,
որք որ և է կերպիւ այս համադումն
ստացած են թէ Սիւրիոյ կառավարու-
թեան զեւապանները միշտ քաղցրու-
թեամբ պիտի վարուին իրենց հետ,
վայրկեան մ'իրենց սովորական տն-
հոգութեան մէջ ապրած մնային Սըր-
Հէնրի Լէյքրաի մէկ աղղու գործո-
ղութեան պատճառաւ, որ Լորա ըլլ-
թրաւոր Բեյտիլի Գիւսպանու-
թեան այն գեղեցիկ օրերը կը յիշե-
ցնէին : Զմուռնիոյ մէջ հրդեհ մը
ծագած լինելով, Այն վրայ հիւ-
պատոսարանին ջրանկրապեան հըր-
դեհը մարելու համար սառսիկ կաշ-
խտեց, երբ քաղաքապետութեան
նախագահ Եահեա պէյ հրատմա ը-
րաւ անոր որ քաղաքին մէկ ուրիշ
կողմն երթայ, ուր նոյն ժամանակ
ուրիշ հրդեհ մը ծագած էր, և կըլ-
լէր թէ Թուրք պաշտօնատարն հոն
կալուած մ'ունենալով, վտանգի մէջ
էր : Այն վրայ զեւապանատան ջը-
րանկրապեար մերձողական պա-
տոսխան տաւուր վրայ, Եահեա պէյ
անոր դիմուն զարկաւ և ծանրապէս
վիրաւորեց : Այն վրայ հիւպատոսը
բնականաբար զանգատեցաւ Զմուռ-
նիոյ կուսակալին, և Եահեա պէյին
պաշտօնականութիւնը պահանջեց : Այս
պահանջն ընդունուելով և գործադ-
րեցաւ : Բայց Եահեա պէյ Կ. Պոլսոյ
մէջ աղղեցութեան տէր բարեկամ-
ներ ունենալով, քիչ ժամանակ ետ-
քը դարձեալ պաշտօնին գլուխն ան-
ցաւ : Սըր Հէնրի Լէյքրա զայս լսելով
աղղու յանդիմանութիւններ ըրաւ
արտաքին գործոց նախարարին, և
նոյն ժամանակ Զմուռնիոյ Այն վրայ-
կան հիւպատոսին հեռագիր մը զըր-
կելով հրաման ըրաւ որ եթէ քաղա-
քապետութեան նախագահը 48 ժամ
ուսն մէջ պաշտօնանկ չլինի, ինք
պէտք է կուսակալին հետ ամեն հա-
ղորդակցութիւն կտրէ, և յայնժամ
աւելի աղղու միջոցներ ձեռք պիտի
առնուին հատուցում ստանալու հա-
մար : Աւելորդ է ըսել թէ 48 ժամ
չանցած՝ Եահեա պէյ երկրորդ ան-
գամ պաշտօնանկ եղաւ : »

